«ԳՆՈՒՄՆԵՐԻ ԱՋԱԿՑՄԱՆ ԿԵՆՏՐՈՆ»

ՊԵՏԱԿԱՆ ՈՉ ԱՌԵՎՏՐԱՅԻՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆ

«06» 03 2015թ.

Հաստատում եմ
«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի
պետի ժամանակավոր պաշտոնակատար
_____ Հ. Թունյան

ՍՑ-ԳԲԽ-01/15 բողոքը քննող
հանձնաժողովին

Ե Զ Ր Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Ղեկավարվելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասի 8-րդ կետով, ՀՀ կառավարության 31.10.2002թ. N 1904-Ն որոշմամբ հաստատված «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կանոնադրության 12-րդ կետի 8-րդ ենթակետով և ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.07.2013թ. N 1.1/13.3/[9984]-13 գրությամբ ներկայացված «Կուրացիո» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02585487) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու հարցը, պարզել ենք հետևյալը.

1. ՀՀ ֆինանսների նախարարության ներկայացրած փաստերը և պահանջը

ՀՀ ֆինանսների նախարարությունը 13.07.2013թ. N 1.1/13.3/[9984]-13 գրությամբ դիմել է «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ին (այսուհետ նաև՝ Կենտրոն)՝ խնդրելով ուսումնասիրել «Կուրացիո» ՍՊԸ-ին (այսուհետ նաև՝ Ընկե-

ություն) գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում (այսուհետ նաև՝ Ցուցակ) ներառելու հիմքերը և այդպիսի հիմքերի առկայության դեպքում ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

ՀՀ ֆինանսների նախարարությունը վերոհիշյալ գրությամբ Կենտրոն է ներկայացրել ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի (այսուհետ նաև՝ Հանձնաժողով) 10.07.2013թ. ԱՇ/ԱՊ N16/2011/239-13 գրության և Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի 2013թ. հունիսի 4-ի թիվ 139-Ա որոշման պատճենները:

«Կուրացիո» ՍՊԸ-ն 12.07.2013թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան Հանձնաժողովի 2013թ. հունիսի 4-ի թիվ 139-Ա որոշման 3-8-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջի մասին, ինչի պատճառով Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը կասեցվել է:

ՀՀ ֆինանսների նախարարությունը 29.12.2014թ. թիվ 05/73-1/746757-14 գրությամբ Կենտրոն է ուղարկել Հանձնաժողովի 26.12.2014թ. ԱՇ/2.3-37/426-14 գրությունը և խնդրել է վերսկսել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում Ընկերությանը ներառելու ընթացակարգը:

2. «Կուրացիո» ՍՊԸ-ի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը, հիմք ընդունելով «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «դ» ենթակետը, կարծիք ստանալու նպատակով 03.02.2015թ. թիվ 09/032-149 գրությամբ դիմել է «Կուրացիո» ՍՊԸ-ին, սակայն Ընկերությունից պատասխան չի ստացվել:

Կենտրոնում 06.02.2015թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ «Կուրացիո» ՍՊԸ-ին ներկայացուցիչները հայտնել են, որ չեն առարկում, որպեսզի Ընկերությունը ներառվի գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, քանի որ Ընկերությունն իր ծավալող գործունեության ոլորտում հանդիսանում է գերիշխող դիրք ունեցող, սակայն խնդրել

են Ընկերությանը ներառել Ցուցակում գնումների մասին ՀՀ օրենսդրությամբ սահմանված հնարավորինս կարճ ժամկետով:

3. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացրած փաստարկները և դիրքորոշումը

ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովը 10.07.2013թ. ԱՇ/ԱՊՆ16/2011/239-13 գրությամբ հայտնել է, որ գնումների շրջանակներում գերիշխող դիրքի չարաշահման համար «Կուրացիո» ՍՊԸ-ի նկատմամբ 2013թ. հունիսի 4-ի թիվ 139-Ա որոշմամբ կիրառվել է պատասխանատվության միջոց և ներկայացնելով ընդունված որոշման պատճենը՝ խնդրել է ձեռնարկել անհրաժեշտ միջոցներ Ընկերությանը Ցուցակում ներառելու համար:

Հանձնաժողովը ՀՀ ֆինանսների նախարարություն ուղարկած 26.12.2014թ. ԱՇ/2.3-37/426-14 գրությամբ հայտնել է, որ Ընկերությունը դատական կարգով բողոքարկել էր Հանձնաժողովի 2013թ. հունիսի 4-ի թիվ 139-Ա որոշումը, ինչի պատճառով Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու ընթացակարգը կասեցվել էր: Սակայն, հաշվի առնելով, որ ՎԴ/6025/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի օրինական ուժի մեջ մտած վճռով հաստատվել է Ընկերության կողմից գերիշխող դիրքի չարաշահման փաստը, ուստի խնդրել է Ընկերությանը Ցուցակում ներառելու գործընթացը վերսկսել:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ը 03.02.2015թ. թիվ 05/032-154 գրությամբ դիմել է ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովին՝ խնդրելով «Կուրացիո» ՍՊԸ-ին Ցուցակում ներառելու հարցի ուսումնասիրության նպատակով Կենտրոնին ներկայացնել ՀՀ վարչական դատարանի ՎԴ/6025/05/13 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած դատական ակտի պատճենը:

Կենտրոնում 06.02.2015թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի ներկայացուցիչները Կենտրոնին են ներկայացրել ՀՀ վարչական դատարանի ՎԴ/6025/05/13 վարչական գործով օրինական ուժի մեջ մտած 23.10.2014թ. վճռի և

2013թ. հունիսի 4-ի թիվ 139-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 15-ի թիվ 559-Ա որոշման պատճենները:

4. ՍՑ-ԳԲԽ-01/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքի քննության համար էական նշանակություն ունեցող փաստերը

ՀՀ ֆինանսների նախարարության 13.07.2013թ. N 1.1/13.3/[9984]-13 գրությամբ «Կուրացիո» ՍՊԸ-ին գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքի քննության համար էական նշանակություն ունեն հետևյալ փաստերը՝

1. «Կուրացիո» ՍՊԸ-ի նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2013թ. հունիսի 4-ի թիվ 139-Ա որոշման 4-րդ կետով Ընկերության գործողությունները և վարքագիծը «Էնտերալ զոնդային սնունդ» ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրքի չարաշահում, և նույն որոշման 5-րդ կետով՝ «Կուրացիո» ՍՊԸ-ի նկատմամբ գերիշխող դիրքը չարաշահելու համար նշանակվել է տուգանք 10.000.000 (տասը միլիոն) ՀՀ դրամի չափով:

2. «Կուրացիո» ՍՊԸ-ն 12.07.2013թ. հայցադիմում է ներկայացրել ՀՀ վարչական դատարան Հանձնաժողովի 2013թ. հունիսի 4-ի թիվ 139-Ա որոշման 3-8-րդ կետերն անվավեր ճանաչելու պահանջի մասին:

3. ՎԴ/6025/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 23.10.2014թ. վճռով հաստատվել է «Կուրացիո» ՍՊԸ-ի և ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի միջև 01.07.2014թ. կնքված հաշտության համաձայնությունը և վարչական գործի վարույթը կարճվել է:

4. ՎԴ/6025/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 23.10.2014թ. վճիռը չի բողոքարկվել և 24.11.2014թ. մտել է օրինական ուժի մեջ:

5. ՎԴ/6025/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 23.10.2014թ. վճռով հաստատված հաշտության համաձայնությամբ Հանձնաժողովը պարտավորվել է հաշտության համաձայնությունը հաստատող դատական ակտի ուժի մեջ մտնելուց հետո 30-օրյա ժամկետում փոփոխել թիվ 139-Ա որոշման 5-րդ կետում ընկերության

նկատմամբ նշանակված պատասխանատվության միջոցի տեսակը և գերիշխող դիրքի չարաշահման համար նշանակված տուգանքի փոխարեն Ընկերությանը տալ նախազգուշացում ու խախտումները հետագայում բացառելու հանձնարարություն, իսկ Ընկերությունը պարտավորվել է ընդունել թիվ 139-Ա որոշմամբ ամրագրված գերիշխող դիրքի չարաշահման փաստը և այլևս դա չդարձնել բողոքարկման առարկա Հայաստանի Հանրապետության և միջազգային դատական ատյաններում, Հայաստանի Հանրապետության պետական մարմիններում:

6. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2013թ. հունիսի 4-ի թիվ 139-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին Հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 15-ի թիվ 559-Ա որոշմամբ Հանձնաժողովի 2013թ. հունիսի 4-ի թիվ 139-Ա որոշման 5-րդ կետում կատարվել է փոփոխություն՝ «ընկերության նկատմամբ նշանակել տուգանք՝ տասը միլիոն դրամի չափով» բառերը փոխարինվել են «ընկերությանը տալ նախազգուշացում և Օրենքի խախտումը հետագայում բացառելու հանձնարարություն» բառերով:

7. ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 15-ի թիվ 559-Ա որոշումը չի բողոքարկվել:

5. ՍՑ-ԳԲԽ-01/15 պաշտոնական ընթացակարգով նախաձեռնված բողոքը քննող հանձնաժողովին «Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի կողմից ներկայացվող հիմնավորումները և եզրահանգումը

Կենտրոնը, ուսումնասիրելով ՀՀ ֆինանսների նախարարության 13.07.2013թ. N 1.1/13.3/[9984]-13 գրությամբ ներկայացված ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 10.07.2013թ. ԱՇ/ԱՊN16/2011/239-13 գրությունը և Ընկերության նկատմամբ պատասխանատվության միջոց կիրառելու մասին Հանձնաժողովի 2013թ. հունիսի 4-ի թիվ 139-Ա որոշումը, ՀՀ ֆինանսների նախարարության 29.12.2014թ. թիվ 05/73-1/746757-14 գրությամբ ուղարկված ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 26.12.2014թ. ԱՇ/2.3-37/426-14 գրությունը, լսելով Կենտրոնում 06.02.2015թ. ժամը 16:00-ին կազմակերպված քննարկման ժամանակ Ընկերության և Պատվիրատուի ներկայացուցիչների

կարծիքները, ինչպես նաև ուսումնասիրելով Պատվիրատուի կողմից ներկայացված ՎԴ/6025/05/13 վարչական գործով ՀՀ վարչական դատարանի 23.10.2014թ. վճիռը և 2013թ. հունիսի 4-ի թիվ 139-Ա որոշման մեջ փոփոխություններ կատարելու մասին ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2014թ. դեկտեմբերի 15-ի թիվ 559-Ա որոշումը, հայտնում է հետևյալը.

«Գնումների մասին» ՀՀ օրենքի (այսուհետ նաև՝ Օրենք) 5-րդ հոդվածի 1-ին մասի 4-րդ կետի «դ» ենթակետի համաձայն՝ մասնակիցն ընդգրկվում է գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում, եթե օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ կայացվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար:

Օրենքի 48-րդ հոդվածի 6-րդ մասի 7-րդ կետի համաձայն՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհուրդն իրավունք ունի որոշում կայացնելու մասնակցին գնումների գործընթացին մասնակցության իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

ՀՀ կառավարության 10.02.2011թ. N 168-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի (այսուհետ՝ նաև Կարգ) 149-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերության համաձայն՝ «Գնումների մասին» ՀՀ օրենքի 5-րդ հոդվածի 2-րդ մասով նախատեսված՝ գնումների բողոքարկման խորհրդի ընդունած որոշման հիման վրա մասնակիցը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկվում է 6 ամսից մինչև մեկ տարի ժամկետով, եթե օրենքով նախատեսված կարգով մասնակցի առնչությամբ ընդունվել է որոշում գնումների գործընթացում հակամրցակցային վարքագծի՝ հակամրցակցային համաձայնության կամ գերիշխող դիրքի չարաշահման համար:

Այսպիսով, ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողովի 2013թ. հունիսի 4-ի թիվ 139-Ա որոշման 4-րդ կետով «Կուրացիո» ՍՊԸ-ի գործողությունները և վարքագիծը «Էնտերալ զոնդային սնունդ» ապրանքային շուկայում համարվել է գերիշխող դիրքի չարաշահում, և Ընկերության առնչությամբ Հանձնաժողովի ընդունած որոշման պայմաններում առկա է Կարգի 149-րդ կետի 2-րդ ենթակետի «բ» պարբերությամբ նախատեսված հիմքն Ընկերությանը գնումների

գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ներառելու համար:

Ելնելով վերոգրյալից՝ առաջարկում ենք ՀՀ ֆինանսների նախարարության 13.07.2013թ. N 1.1/13.3/[9984]-13 գրությամբ Ընկերությանը գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում ընդգրկելու պաշտոնական ընթացակարգով նախաձեռնած բողոքը բավարարել՝ «Կուրացիո» ՍՊԸ-ին (ՀՎՀՀ 02585487) ներառել գնումների գործընթացին մասնակցելու իրավունք չունեցող մասնակիցների ցուցակում՝ ՀՀ գնումների բողոքարկման խորհրդի որոշումը կայացվելու օրվանից հաշված մեկ տարվա ընթացքում Ընկերության կողմից գնումների գործընթացին մասնակցելու հայտ ներկայացնելու դեպքում, այդ պահից հաշված 8 ամիս ժամկետով:

«Գնումների աջակցման կենտրոն» ՊՈԱԿ-ի

Պետի տեղակալ՝ Հ. Այունց

Գնումների աջակցման և իրավական խորհրդատվության վարչության պետ՝ Հ. Ենգոյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի վարիչ՝ Դ. Դավթյան

Գնումների բողոքարկման և ահազանգման բաժնի առաջատար մասնագետ՝ ՍՑ-ԳԲԽ-01/15 բողոքը քննող հանձնաժողովի քարտուղար՝ Ռ. Մկրտչյան